



**ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ
ՄԱՏՉԵԼԻԻՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Բովանդակություն

Ներածություն	2
1. Հանրային շահի պաշտպանության և հանրային նշանակության հարցերով հասարակական կազմակերպությունների՝ դատարան դիմելու իրավունքը. միջազգային փորձի ուսումնասիրություն	3
2. Հասարակական կազմակերպությունների դատավարական իրավասուբյեկտության օրենսդրական կարգավորումները Հայաստանի Հանրապետությունում	9
3. «Հանրային շահ» և «հանրային նշանակության հարցեր» սահմանումները ..	17
Առաջարկություններ	23

Ներածություն

Հայաստանի Հանրապետությունում (ՀՀ) հասարակական կազմակերպությունների դատավարական իրավասուբյեկտությանն առնչվող հարցադրումներն այլոց իրավունքների պաշտպանությամբ դատարան դիմելու իրավունքի (*actio popularis*)¹ տեսանկյունից շարունակում են մնալ չլուծված՝ չնայած այն հանգամանքին, որ դեռևս 2010 թվականին ՀՀ սահմանադրական դատարանի կողմից նախանշվել են հասարակական կազմակերպությունների դատավարական իրավասուբյեկտության ընդլայնման ուղղությունները: ՀՀ սահմանադրական դատարանի [ՄԴՈ-906 որոշման](#) տրամաբանությամբ պետք է ընթանային օրենսդրական զարգացումներ՝ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների նկատմամբ հասարակական վերահսկողության արդյունավետության բարձրացման նպատակով:

Թեև Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակը քանիցս բարձրաձայնել է «*actio popularis*» ինստիտուտի որդեգրման կարևորությունը՝ իրավական և քաղաքական հարաբերությունների զարգացման տարբեր փուլերում՝ [2013 թվականի նոյեմբերին](#) և [2020 թվականի հունվարին](#), այնուամենայնիվ, առ այսօր հասարակական կազմակերպությունները զրկված են հանրային նշանակություն ունեցող հարցերով դատարան դիմելու իրավունքից և ներկայումս հասարակական կազմակերպություններն իրենց շահառուների իրավունքների պաշտպանության հարցով դատարան դիմելու իրավունք ունեն միայն շրջակա միջավայրի պահպանության ոլորտում, ուստի արդարադատության մատչելիության իրավունքը՝ որպես Սահմանադրությամբ նախատեսված արդար դատաքննության իրավունքի իրացման կարևոր նախապայման, հասարակական կազմակերպությունների համար երաշխավորված չէ:

¹ Գործողություն՝ ըստ ժողովրդի օրենքի: Հասարակական կամ համընդհանուր իրավունք՝ դատական վարույթ նախաձեռնելու կամ քրեական հետապնդում սկսելու համար: Ներքին օրենսդրության մեջ այս տերմինը հաճախ օգտագործվում է սահմանելու համար պետության անունից դատական հայցեր ներկայացնելու քաղաքացիների իրավունքները, օրինակ, որպես *qui tam* գործողություն: “Action at law of the people.” A public or universal right to initiate a lawsuit or prosecution. In domestic law, this term is often used to refer to a rights of private citizens to bring a local action on behalf of the state, such as a *qui tam* action, տե՛ս Guide to Latin in International Law. Aaron X. Fellmeth, Maurice Horwitz. Oxford University Press, 2009. Էջ 12.); Հռոմեական իրավունքում *actio popularis* սկզբունքը ընկալվում էր որպես գործողություն, որն իրականացվում էր անհատի կողմից՝ ի շահ հանրության, տե՛ս Schwelb, 2 Israel Yearbook Hum Rts at 47 (cited in note 22):

1. Հանրային շահի պաշտպանության և հանրային նշանակության հարցերով հասարակական կազմակերպությունների՝ դատարան դիմելու իրավունքը. միջազգային փորձի ուսումնասիրություն

ԵՄ-ի հիմնադիր պայմանագրերից և ոչ մեկը չի պարունակում երրորդ անձանց շահերի պաշտպանության համար դատավարական իրավասությունները սահմանափակող որևէ նորմ, ինչից կարելի է եզրակացնել, որ ցանկացած անձ, այդ թվում՝ հասարակական կազմակերպությունները, կարող են հանրային շահի խախտման դեպքում պահանջել արդյունավետ իրավական պաշտպանություն:

Եվրոպական Միության Արդարադատության Դատարանի կողմից արտահայտվել է դիրքորոշում առ այն, որ «...անհատները, ինչպես նաև նրանց շահերը ներկայացնող միավորումներն ունեն դատական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք (...) և այսպիսի իրավունքի պաշտպանությունը պետք է բխի անդամ պետությունների սահմանադրաիրավական նորմերից»: Մեկ այլ որոշմամբ Դատարանը նշել է, որ «...անձի դատավարական իրավասությունները պետք է որոշվի ազգային օրենսդրությամբ: Իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների նախատեսման համար համապատասխան միջոցառումների իրականացումը ներպետական դատարանների գործառույթն է», ինչպես նաև «...անդամ պետությունն ինքը պիտի ապահովի անձի համար դատական պաշտպանությունը (...), յուրաքանչյուր անդամ պետության իրավական համակարգ պետք է նախատեսի դատարաններ ու տրիբունալներ, սահմանի համապատասխան կանոններ, ապահովելու համար Միության օրենսդրությունից բխող իրավունքների պաշտպանությունը... »²:

ԵՄ-ի դիրեկտիվները, կանոնները և հանձնարարականներն ամրագրում են դրույթներ, որոնք պահանջում են անդամ պետություններից սպառողների իրավունքների³, առևտրային իրավունքի⁴, շրջակա միջավայրի պահպանության՝ էկոլոգիական իրավունքի⁵, անձնական տվյալների պաշտպանության⁶ ոլորտներում ընտրել կազմակերպությունների (հիմնականում ոչ առևտրային, որոնց նպատակներից է խնդրո առարկա իրավունքի պաշտպանությունը), որոնք կարող են դիմել դատարան՝ առանց լիազորվելու անհատ-դիմումատուի կողմից: Ոչ

² Տե՛ս [Հասարակական կազմակերպությունների դատավարական իրավասությունները Եվրոպական Միության անդամ երկրներում](#), էջ 8:

³ Directive 2009/22/EC on injunctions for the protection of consumers' interests [2009] OJ L110/30, Article 2.

⁴ Directive 2011/7/EU on combating late payment in commercial transactions [2011] OJ L48/1, Article 7(5).

⁵ Regulation (EC) 1367/2006 on the application of the provisions of the Aarhus Convention on Access to Information, Public Participation in Decision-making and Access to Justice in Environmental Matters to Community institutions and bodies [2006] OJ L264/13, Article 10(1).

⁶ Regulation (EU) 2016/679 on the protection of natural persons with regard to the processing of personal data and on the free movement of such data (General Data Protection Regulation) (2016) OJ L119, Article 80, which will come into force 25 May 2018.

առևտրային և կոնկրետ իրավունքի պաշտպանությունը որպես կանոնադրական նպատակ նախատեսող կազմակերպությունները պետք է երաշխավորված լինեն հանդես գալու դատավարությանն՝ ի շահ իրենց կամ այլ անձի/անձանց (իրավաբանական կամ ֆիզիկական անձինք)⁷:

Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի 2004 թ. դեկտեմբերի 15-ի «Վարչական ակտերի նկատմամբ դատական վերահսկողության մասին» թիվ (2004)20 հանձնարարականի համաձայն անդամ պետությունները քաջալերվում են ուսումնասիրելու՝ արդյո՞ք դատական կարգով վերանայման հնարավորությունը չպետք է բաց լինի ընկերակցությունների կամ համայնքային կամ ընդհանուր շահեր պաշտպանելու իրավասությամբ օժտված այլ անձանց կամ կառույցների համար (Սկզբունք 2, կետ 1): Հանձնարարականը քաջալերում է հասարակական կամ համայնքային շահերի պաշտպանության իրավունքով օժտված հասարակական կազմակերպություններին, միավորումներին, այլ անձանց կամ մարմիններին հնարավորություն տալ պաշտպանել այս իրավունքները և դրանց պաշտպանության նպատակով դիմել դատարան: Նշվածը վերաբերում է այն վարչական ակտերին, որոնք անդրադառնում են ոչ թե անհատի, այլ անձանց խմբերի շահերին:

Ընդ որում «վարչական ակտ» հասկացության տակ ենթադրվում է.

1. անհատական և նորմատիվ իրավական ակտերը, որոնք ընդունվել են վարչական մարմնի կողմից և որոնք կարող են ազդել ֆիզիկական կամ իրավաբանական անձանց իրավունքների վրա,
2. գործողության մերժման կամ անգործության դեպքերը, երբ վարչական մարմնի ներկայացուցիչը պարտավոր է դիմումի հիման վրա վարույթ հարուցել:

Վերոգրյալից պարզ է դառնում, որ խմբային շահերի պաշտպանությամբ հասարակական կազմակերպություններին և միավորումներին դատարան դիմելու իրավունքի և դեպքերի վերապահումը թողնված է պետությունների հայեցողությանը:

Այս կապակցությամբ հասարակական կազմակերպությունների դատավարական իրավասուբյեկտության ճանաչման և ամրագրման հարցում ԵՄ-ի անդամ պետությունները որդեգրել են առավել համապարփակ մոտեցում, մասնավորապես՝ շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպություններին, միավորումներին և իրավունքի այլ սուբյեկտներին օժտելով դատավարական լիարժեք իրավասուբյեկտությամբ՝ հանրային շահի պաշտպանության հարցերով: Հարկ է փաստել, սակայն, որ «հանրային շահ» եզրույթի ընկալման հարցում ԵՄ-ի անդամ պետությունների իրավական կարգավորումները ոչ բոլոր դեպքերում են համընկնում, ընդ որում, մի դեպքում՝ պետությունները նախատեսում են ավելի ընդարձակ, մեկ այլ դեպքում՝ սահմանափակ հարաբերություններ, որոնց

⁷ Commission Recommendation on common principles for injunctive and compensatory collective redress mechanisms in the Member States concerning violations of rights granted under Union Law [2013] OJ L201.

դատաիրավական պաշտպանությամբ հասարակական կազմակերպությունները կարող են ձեռնամուխ լինել:

ԵՄ-ի անդամ պետությունները հանրային նշանակություն ունեցող հարցերով հասարակական կազմակերպությունների դատավարական իրավասուբյեկտությունը կարգավորում են երկու մակարդակով.

1. *actio popularis*, երբ իրավական շահագրգռվածությունը դատարան դիմելիս պարտադիր նախապայման չի հանդիսանում և կարող է հայցվել նաև երրորդ անձանց իրավունքների պաշտպանությունը,
2. սուբյեկտիվ իրավունքների խախտման հիմքով դատարան դիմելու իրավունք:

Պորտուգալիայի Սահմանադրության 52-րդ հոդվածը երաշխավորում է յուրաքանչյուրի «*actio popularis*» իրավունքը անձամբ կամ այնպիսի միավորումների միջոցով, որոնց նպատակն է պաշտպանել վիճարկվող իրավունքը: Փաստորեն, ֆիզիկական անձինք խմբային շահերի պաշտպանության հարցերով առանց իրավական շահագրգռվածության կարող են դիմել դատարան, իսկ կազմակերպությունները կարող են դիմել այն դեպքում, երբ զբաղվում են այն իրավական շահերի պաշտպանությամբ, որն ակնկալվում է իրականացնել անկախ նրանից, թե տվյալ կազմակերպությունն ունի՞ անմիջական ուղղակի շահագրգռվածություն, թե ոչ: Պորտուգալիայի Սահմանադրության 52-րդ հոդվածի 3-րդ մասը մասնավորեցնում է հանրային շահերի պաշտպանության ներկայացուցչության դեպքերը, ամրագրելով, որ այն հասանելի է միայն հանրային առողջության, սպառողների իրավունքների, կյանքի որակի, շրջակա միջավայրի և մշակութային ժառանգության, ինչպես նաև հանրային սեփականության պահպանության ոլորտներում⁸: Ընդ որում՝ Պորտուգալիայի իրավական համակարգը տարբերակում է վարչաիրավական «*actio popularis*» և քաղաքացիաիրավական «*actio popularis*». դատական պաշտպանություն նշված սկզբունքով կարող է իրականացվել թե՛ հանրային իրավունքի և թե՛ մասնավոր իրավունքի սուբյեկտների դեմ:

Պորտուգալիայի Հյուսիսային վարչական դատարանն արձանագրել է, որ հանրային շահից բխող իրավունքի պաշտպանությունը հանրության մասնակցության վրա հիմնված ժողովրդավարության կենսական տարրերից է, որը, թեև շեղվում է դատավարական սուբյեկտիվ իրավունքի պաշտպանության ընդհանուր կանոնից, նպատակ է հետապնդում պաշտպանել հանրային և ոչ անհատական շահերը: Այն հանդիսանում է համայնքի քաղաքական կյանքին ակտիվ մասնակցության գործիք, որին անձը պատկանում է:

Այլ կերպ ասած՝ «*actio popularis*» իրավունքը դատարան դիմելու իրավունք է, որին, թեև, բնութագրական չէ կոնկրետ կամ դիպվածային կերպը, անմիջական կամ անձնական

⁸ Տե՛ս Պորտուգալիայի Սահմանադրության 52(3) հոդված, հասանելի է՝ <https://dre.pt/constitution-of-the-portuguese-republic>:

շահագրգռվածությունն, այնուամենայնիվ, այն վերացական չէ և հանդիսանում է նյութական իրավունքի պաշտպանության արդյունավետ երաշխիք⁹:

Այսպիսով, «*actio popularis*» սկզբունքը Պորտուգալիայի իրավական համակարգում սահմանադրաիրավական սկզբունք է, հանդիսանում է անձի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության իրականացման եղանակներից մեկը, և հնարավորություն է ընձեռում որոշակի անձանց և միավորումներին վարչական և դատական մարմիններում հանդես գալ թե՛ անհատական և թե՛ կոլեկտիվ շահերի պաշտպանությամբ:

Ինչպես նկատեցինք, Պորտուգալիայի Սահմանադրությամբ ամրագրված ոլորտները, թեև սահմանափակ են՝ հանրային առողջությունը, շրջակա միջավայրի պաշտպանությունը, կյանքի որակը, ապրանքների և ծառայությունների սպառումը, մշակութային ժառանգությունը, սակայն ձևավորված դատական պրակտիկան ցույց է տալիս, որ հասարակական միավորումների կողմից դատական պաշտպանության առարկա կարող են հանդիսանալ նաև այլ ոլորտներից բխող իրավահարաբերություններ, որոնք հատուկ սահմանված չեն Սահմանադրությամբ կամ օրենքով:

Պորտուգալիայի Սահմանադրությունը և օրենքները չեն սահմանում հասարակական միավորումների դատարան դիմելու իրավունքը քաղաքական իրավունքների պաշտպանության համակարգում, այնուամենայնիվ, այն շտկվել է դատական պրակտիկայի միջոցով, որով սահմանվել է, որ «*actio popularis*»-ը նախևառաջ պետք է դիտարկել քաղաքական իրավունքների համակարգում և հետո միայն՝ սոցիալ-տնտեսական և այլ իրավունքների իրացման համատեքստում:

Նիդերլանդներն ապահովում են կազմակերպությունների և միավորումների դատարան դիմելու իրավունքը քաղաքացիական իրավունքի բոլոր ոլորտներում, սակայն որպես նախապայման սահմանվում է իրավական շահագրգռվածությունը¹⁰: Դատական ներկայացուցչություն իրականացնելու լիազորություն ունեցող կազմակերպությունները, հանդիսանում են, *inter alia*, հիմնադրամները կամ միավորումները, որոնց կանոնադրությամբ ամրագրված կորպորատիվ նպատակներն են՝ պաշտպանել որոշակի կոնկրետ շահեր: Կազմակերպությունները ներկայացուցչությունն իրականացնում են կանոնադրությամբ հետապնդվող կոնկրետ շահի պաշտպանության նպատակով՝ իրականացնելով ինչպես կազմակերպության անդամների, այնպես էլ այլոց իրավունքների պաշտպանությունը:

Նիդերլանդներում թե՛ ֆիզիկական և թե՛ իրավաբանական անձանց դատավարական իրավասուբյեկտությունը որոշելու համար հիմք է ընդունվում սուբյեկտի շահագրգռվածությունը (interest-based approach) և իրավունքի խախտման փաստը (right-based

⁹ Decision of May 2013, case no 132, of the Northern Central Administrative Court.

¹⁰ Dutch Civil Code, Articles 3:305a to 3:305d.

approach)¹¹: Հանրային նշանակություն ունեցող հարցերի դեպքում իրավաբանական անձի դատավարական իրավասուբյեկտությունը ճանաչվում է այնքանով, որքանով որոշակի շահերի պաշտպանության իրականացումն ամրագրված է տվյալ կազմակերպության կանոնակարգերում և փաստացի իրականացվում է իրավաբանական անձի գործունեությամբ: Այսինքն, դատարանում վիճարկվող կոլեկտիվ կամ ընդհանուր շահերը պետք է անմիջապես համակցվեն կազմակերպության շահերի հետ:

Բեղգիայի սպառողների իրավունքների ոլորտը կարգավորող օրենսդրությունը հնարավորություն է տալիս կազմակերպություններին, այդ թվում՝ ոչ առևտրային կազմակերպություններին, որոնց նպատակն է պաշտպանել և վերականգնել սպառողների խախտված իրավունքները, իրականացնել բոլոր դատավարական գործողություններն՝ ի շահ բոլոր սպառողների¹²: Կազմակերպություններն օրենքով լիազորված են գործել ի պաշտպանություն որոշակի խմբի շահերի՝ ներկայացնելով խմբում ներառվող անորոշ շրջանակի անձանց իրավունքները դատարանում:

Էստոնիայում ճանաչվում է միավորումների դատավարական իրավասուբյեկտությունը վարչական, քաղաքացիական և քրեական գործերով: Դատական պրակտիկան ցույց է տալիս, որ հանրային նշանակություն ունեցող դատական գործերը վարչական իրավահարաբերություններից ծագող խնդիրներն են:

Ռուսաստանի վարչական դատավարության օրենսգրքի 4-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր շահագրգիռ անձ իրավունք ունի դիմելու դատարան այլոց իրավունքների և հանրային շահի պաշտպանության նպատակով (Վարչական դատավարության օրենսգրքով և դաշնային օրենքներով սահմանված դեպքերում): Դատավարական իրավունքները և պարտականությունները ճանաչվում են հավասարապես բոլոր անձանց, (...) այդ թվում՝ հասարակական, կրոնական և ոչ պետական այլ միավորումների համար, ինչպես իրենց, այնպես էլ հանրային իրավահարաբերություններում ծագող իրավական շահերի պաշտպանության նպատակով:

ԵՄ-ի անդամ պետությունների մեծ մասը հասարակական կազմակերպություններին օժտել են արդարադատության մատչելիությամբ այնպիսի կենսական ոլորտում, ինչպիսին է խտրականության բացառումն ու արգելքը:

ԵՄ-ի՝ անկախ ռասայական կամ էթնիկ ծագումից անձանց նկատմամբ հավասար վերաբերմունքի սկզբունքի իրացման մասին 2000/43 դիրեկտիվը¹³ անդամ պետություններին պարտավորեցնում է ապահովել, որպեսզի այն միավորումները, կազմակերպությունները կամ այլ իրավաբանական անձինք, որոնք իրենց ազգային օրենսդրությամբ սահմանված

¹¹ 2 Backes, Chris, “The implementation of Article 9.3 of the Aarhus Convention on access to justice in the Netherlands”, 2012.

¹² Belgian Code of Economic Law, Art. XVII. 36 and Arts XVII. 38 to 40.

¹³ 37 Council Directive 2000/43/EC implementing the principle of equal treatment between persons irrespective of racial or ethnic origin [2000] OJ L180.

չափանիշների համաձայն ունեն օրինական շահ՝ դիրեկտիվի դրույթների իրականացման հետ կապված, կարողանան մասնակցել սույն դիրեկտիվով սահմանված պարտականությունների կատարման համար նախատեսված ցանկացած դատական և/կամ վարչական վարույթի՝ հայցվորի անունից կամ նրա թույլտվությունն ստանալու դեպքում¹⁴:

Թեև նշված դիրեկտիվն ուղղակի սահմանում է դիմումատուի համաձայնության առկայության նախապայմանը, անդամ պետությունները կաշկանդված չեն առավել բարենպաստ և շահավետ դրույթներ ամրագրելու տեսանկյունից¹⁵՝ լիազորելով կազմակերպություններին հայցելու վարչական կամ դատական պաշտպանություն՝ հանդես չգալով կոնկրետ դիմումատուի անունից կամ առհասարակ հանդես գալ որոշակի դիմումատուի բացակայության պայմաններում¹⁶:

Մի շարք եվրոպական պետություններ սահմանել են քննարկվող խնդրի առնչությամբ առավել ընդլայնված լիազորություններ այնպիսի կազմակերպությունների համար, ում նպատակն է պաշտպանել խտրականությունից տուժած անձանց շահերը, հանդես գալ դատարանում՝ առանց տուժողի համաձայնությամբ:

Օրինակ, **Հունգարիայի օրենսդրությունը**¹⁷ հնարավորություն է տալիս հասարակական կազմակերպություններին և հիմնադրամներին՝ «խոցելի խմբերին հավասար սոցիալական հնարավորությունների տրամադրման համար» պայքարի կամ մարդու իրավունքների պաշտպանության նպատակ հետապնդելու դեպքում դիմել դատարան՝ հավասար վերաբերմունքի կամ խտրականության դեմ պաշտպանության հայցով այն դեպքում, երբ իրավունքի խախտումն առնչվում է ոչ թե մեկ անձի, այլ անձանց խմբի կամ, առհասարակ, հնարավոր չէ հստակորեն որոշել անձանց խմբին, ում նկատմամբ դրսևորվել է իրավունքի խախտումը¹⁸:

Խտրականության բոլոր ձևերի դեմ պայքարում հասարակական կազմակերպություններին դատարան դիմելու իրավունքով օժտել է նաև **Ռումինիայի օրենսդրությունը**՝ կրկին որպես նախապայման սահմանելով մարդու իրավունքների պաշտպանության և խտրականության բացառման կանոնադրական նպատակի առկայությունը¹⁹:

Բուլղարիայի օրենսդրության համաձայն՝ խտրականության դեմ պայքարի և խտրականության բացառման իրավական միջոցները տարբերակվում են ըստ միջոցների, որոնք իրականացվում են հատուկ ստեղծված մարմնի՝ PADC (the independent equality body)-

¹⁴ Նույն տեղում՝ հոդված 7(1):

¹⁵ Նույն տեղում՝ հոդված 6:

¹⁶ CJEU, Case C-54/07, Centrum voor gelijkheid van kansen en voor racismebestrijding v. Firma Feryn VN, [2008] ECR I-5187, Judgment of 10 July 2008, para. 27.

¹⁷ Act on Equal Treatment and the Promotion of Equal Opportunities 2003

¹⁸ Նույն տեղում՝ հոդված 3(e):

¹⁹ Sfr u 48 Anti-Discrimination Law, Article 28(2):

ի²⁰ միջոցով և դատական պաշտպանության միջոցների: Դատական պաշտպանության միջոցը հասանելի է նաև ոչ առևտրային այն կազմակերպություններին, որոնց ներգրավումը միտված է հանրային շահի պաշտպանությանը²¹: Սակայն նշված կազմակերպությունները դատարան կարող են դիմել այն դեպքում, երբ ոչ թե մեկ, այլ մի շարք անձանց իրավունքներն են խախտվել²²:

Հավելենք, որ նշված բոլոր երկրները հասարակական կազմակերպություններին դատարան դիմելու իրավունք վերապահել են նաև շրջակա միջավայրի պահպանության ոլորտում:

ՀՀ իրավական համակարգը, ինչպես բոլոր այլ ոլորտներում (բացառությամբ՝ շրջակա միջավայրի պաշտպանության), այնպես էլ խտրականության բացառման և խտրականությունից տուժած անձանց իրավունքների պաշտպանության ոլորտում, հասարակական կազմակերպություններին դատարան դիմելու իրավունք չի վերապահում:

Այս կապակցությամբ հարկ է նշել, որ այս պահին լրամշակման փուլում է գտնվում «Իրավահավասարության ապահովման մասին» ՀՀ օրենքի նախագիծը²³ և հիմք ընդունելով միջազգային լավագույն փորձը՝ անհրաժեշտ է Նախագծում համապատասխան կարգավորմամբ սահմանել նաև խտրականության բոլոր ձևերի դրսևորման դեմ հասարակական կազմակերպությունների կողմից դատարան դիմելու իրավունքը՝ շահառուների իրավունքների պաշտպանության նպատակով:

Թեև մի շարք երկրներում վարչական գործերով հայց ներկայացնելու իրավասության հիմնական չափանիշ է հանդիսանում «իրավական շահագրգռվածությունը», վերջինս դատաիրավական պրակտիկայում ստացել է այնքան լայն մեկնաբանություն, որ հասարակական կազմակերպություններին և այլ միավորումներին հնարավորություն է ընձեռում հանդես գալ որոշակի խմբի կոլեկտիվ իրավունքի պաշտպանությամբ, եթե այդ պաշտպանությունը տվյալ միավորման կոնկրետ նպատակների շրջանակներում է:

Այսպիսով, այլոց իրավունքների պաշտպանությամբ դատարան դիմելու իրավունքի առնչությամբ միջազգային փորձի ուսումնասիրության արդյունքները վկայում են, որ եվրոպական երկրներում այս ինստիտուտը գործում է լայն ծավալով և իրավունքի պաշտպանության տարբեր ոլորտներում:

2. Հասարակական կազմակերպությունների դատավարական իրավասությունների տարածման կարգավորումները Հայաստանի Հանրապետությունում

²⁰ Տե՛ս Protection Against Discrimination Act (PADA), Articles 47, 50, and 68(1):

²¹ Նույն տեղում՝ հոդված 71(2):

²² Նույն տեղում՝ հոդված 71(3):

²³ <https://www.e-draft.am/projects/1801/about>

Անձի իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության իրավունքը նախատեսված է ՀՀ Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածներով, համաձայն որոնց՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության, անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

Անձի իրավունքների ու ազատությունների դատական պաշտպանության իրավունքի իրացումը երաշխավորելու տեսանկյունից առաջնահերթ կարևորություն ունի այն հարցի պատասխանը, թե որքանով է հասանելի արդարադատությունը, որքան արդյունավետ են անձի խախտված իրավունքների պաշտպանության համար դատարան դիմելու իրավունքի իրացման պայմանները և գործիքակազմը: Դատարան դիմելու անձի իրավունքի իրացման լիարժեք երաշխավորումն անձի սահմանադրական իրավունքներն ու ազատությունները դատական կարգով պաշտպանելու առաջնահերթ իրավական նախապայմաններից է:

ՀՀ Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածներն, ինչպես նաև Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասը չեն բացառում այլ անձանց կողմից ուրիշի խախտված իրավունքների պաշտպանության նկատառումներով դատարան դիմելու հնարավորությունը:

Այլոց խախտված իրավունքների պաշտպանությամբ դատարան դիմելու իրավունքը ՀՀ օրենսդրությամբ դիտարկվում է որպես բացառիկ կանոն, որի իրացման դեպքերի և կարգի սահմանումը բացառապես օրենսդիր մարմնի իրավասության հարց է²⁴: Այսինքն, ի տարբերություն վերը ներկայացված պետությունների փորձի, որտեղ դատական պրակտիկայում տրված մեկնաբանություններով հաղթահարվել է հասարակական կազմակերպությունների արդարադատության մատչելիության իրավունքի իրացման արգելքը, ՀՀ-ում այդ բացը չի կարող լրացվել դատաիրավական պրակտիկայում տրվող մեկնաբանությունների միջոցով:

Հաշվի առնելով հասարակական կազմակերպությունների դերը պետության և քաղաքացիական հասարակության կյանքում, առաջնորդվելով վերջիններիս գործունեության արդյունավետության բարձրացման նկատառումներով՝ ՀՀ սահմանադրական դատարանը գտել է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը շահագրգիռ (կանոնադրական համապատասխան իրավասությամբ օժտված) հասարակական կազմակերպությունների համար, որպես իրավաբանական անձ, կարող է սահմանել տվյալ ոլորտում անձանց խախտված իրավունքների համար դատարան դիմելու իրավունքի իրացման դեպքերը և կարգը՝ հաշվի առնելով *actio popularis* բողոքների ինստիտուտի առնչությամբ եվրոպական ներկա զարգացումների միտումները: Նման իրավակարգավորումը կնպաստեր ոչ միայն խախտված իրավունքների և օրինական շահերի

²⁴ Տես՝ ՀՀ սահմանադրական դատարանի 2010 թվականի սեպտեմբերի 7-ի թիվ ՍԴՈ-906 որոշումը:

պաշտպանության, այդ թվում դատական պաշտպանության արդյունավետությանը, այլև կբարձրացնեն քաղաքացիական հասարակության բաղադրատարր հանդիսացող՝ հասարակական կազմակերպությունների դերը: Ընդ որում, ուրիշի խախտված իրավունքների համար դատարան կամ այլ մարմիններին ու պաշտոնատար անձանց դիմելու իրավունքի իրացման դեպքերը և կարգը սահմանելիս հարկ կլինի հաշվի առնել միայն այն հասարակական կազմակերպություններին, որոնց նպատակներից են **կոլեկտիվ կամ համայնքային կոնկրետ շահերի պաշտպանությունը**²⁵:

Թեև ՀՀ սահմանադրական դատարանը դեռևս 2010 թվականին նախանշել էր, որ «actio popularis բողոքների ինստիտուտի առնչությամբ եվրոպական ներկա զարգացումների միտումները հաշվի առնելով՝ հասարակական կազմակերպություններին անհրաժեշտ է օժտել կոնկրետ ոլորտներում այլ անձանց խախտված իրավունքների համար դատարան դիմելու իրավունքով՝ հաշվի առնելով հասարակական կազմակերպության կանոնադրական նպատակները և գործունեության առարկան», այնուամենայնիվ, օրենսդրի մոտեցումը՝ հասարակական կազմակերպությանը դատարան դիմելու իրավունքի օժտման հարցում կրել է դիպվածային բնույթ:

«Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի համաձայն՝ «Կազմակերպությունն իր կանոնադրության նպատակներին համապատասխան իրավունք ունի (...)7) օրենքով սահմանված կարգով ներկայացնելու ու պաշտպանելու իր և իր անդամների, շահառուների և կամավորների իրավունքներն ու օրինական շահերն այլ կազմակերպություններում, դատարանում, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում»:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Կազմակերպությունն իր շահառուների օրինական շահերը դատարանում ներկայացնում է շրջակա միջավայրի պահպանության ոլորտում»:

Նույն օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Կազմակերպության շահառուներն են նրա կանոնադրությամբ նախատեսված անձինք կամ անձանց խմբերը՝ ի շահ որոնց իրականացվում է Կազմակերպության գործունեությունը: Կազմակերպության կողմից կամավորներ ներգրավելու իրավահարաբերությունների նկատմամբ կիրառվում են «Բարեգործության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը և Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգիրքն այնքանով, որքանով այդ կարգավորումները չեն հակասում սույն օրենքին»:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1.1 մասի համաձայն՝ «Հասարակական կազմակերպությունները վարչական դատարան կարող են դիմել նաև սույն օրենսգրքի 29.3-րդ գլխով նախատեսված դեպքերում»:

²⁵ Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի 2010 թվականի սեպտեմբերի 7-ի թիվ ՍԴՈ-906 որոշումը:

Նույն օրենսգրքի 216.6 հոդվածի համաձայն՝ «1. Հասարակական կազմակերպությունը իր շահառուների օրինական շահերը դատարանում ներկայացնում է շրջակա միջավայրի պահպանության ոլորտում: 2. Կազմակերպությունը սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված ոլորտից բխող հարցերով կարող է հայց ներկայացնել, եթե՝ 1) հայցադիմումը բխում է կազմակերպության կանոնադրական նպատակներից և խնդիրներից և ուղղված է կազմակերպության շահառուների՝ կազմակերպության կանոնադրային նպատակների հետ կապված կոլեկտիվ շահերի պաշտպանությանը. 2) «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի շրջանակներում մասնակցել է հիմնադրությային փաստաթղթերի կամ նախատեսվող գործունեության վերաբերյալ հանրային քննարկումներին կամ հանրային քննարկումներին մասնակցելու հնարավորություն չի տրվել, և 3) հայց ներկայացնելու պահին նախորդող առնվազն 2 տարվա ընթացքում գործունեություն է ծավալել սույն հոդվածի 2-րդ մասում նշված ոլորտում»:

Վերոնշյալ նորմերի վերլուծությունից պարզ է դառնում, որ հասարակական կազմակերպությունների՝ դատարան դիմելու իրավունքը սահմանափակված է միայն շրջակա միջավայրի պահպանության ոլորտում: Նախքան հասարակական կազմակերպությունների կողմից դատարան դիմելու իրավունքի ոլորտային սահմանափակվածությանն անդրադառնալը, հարկ է ուշադրություն դարձնել նաև շրջակա միջավայրի պահպանության ոլորտում օրենսդրի իրավական կարգավորմանը: Մասնավորապես, «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Կազմակերպությունը սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված ոլորտից բխող հարցերով կարող է հայց ներկայացնել, եթե՝ 1) հայցադիմումը բխում է Կազմակերպության կանոնադրական նպատակներից և խնդիրներից և ուղղված է Կազմակերպության շահառուների՝ Կազմակերպության կանոնադրային նպատակների հետ կապված կոլեկտիվ շահերի պաշտպանությանը. 2) «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի շրջանակներում մասնակցել է հիմնադրությային փաստաթղթերի կամ նախատեսվող գործունեության վերաբերյալ հանրային քննարկումներին, կամ հանրային քննարկումներին մասնակցելու հնարավորություն չի տրվել և 3) հայց ներկայացնելու պահին նախորդող առնվազն երկու տարվա ընթացքում գործունեություն է ծավալել սույն հոդվածի 2-րդ մասում նշված ոլորտում»:

Վերոգրյալից պարզ է դառնում, որ որպեսզի հասարակական կազմակերպությունն իրավունք ունենա դիմել դատարան անհրաժեշտ է վերը նշված նորմում ամրագրված երեք պայմանների միաժամանակյա առկայությունը, այսինքն, կոնկրետ ոլորտում իրավունքի պաշտպանությունը կանոնադրական նպատակներից բխելը միայն բավարար չէ դատարան

դիմելու համար:

Նշվածի կապակցությամբ Եվրոպական միության արդարադատության դատարանը արձանագրել է, որ շահագրգիռ հասարակության ներկայացուցիչները Դիրեկտիվ 85/337-ի հոդված 1 (2) և 10a իմաստով պետք է ունենան որոշման վիճարկման իրավական հնարավորություն՝ անկախ այն դերից, որը նրանք ունեցել են նախատեսվող գործունեության վերաբերյալ քննարկումների փուլում, այդ թվում՝ անկախ նրանից՝ մասնակցել են հանրային քննարկումներին և հայտնել կարծիք, թե ոչ: Այնուհետև հավելել է, որ, թեև 85/337 դիրեկտիվը նախատեսում է, որ շահագրգիռ հասարակության ներկայացուցիչները, ունենալով «բավարար շահագրգռվածություն», իրավունք ունեն վիճարկելու որոշումը, բայց դիրեկտիվը ոչ մի դեպքում չի սահմանափակում դատավարական մասնակցությունն այն հիմնավորմամբ, որ շահագրգիռ անձինք արդեն իսկ հնարավորություն են ունեցել արտահայտելու իրենց կարծիքը որոշումների ընդունման առավել վաղ փուլում: Նույն կերպ, այն փաստը, որ ներպետական օրենսդրությունը լայն հնարավորություններ է նախատեսել որոշումների ընդունման առավել վաղ փուլում մասնակցելու, արդարացում չի կարող հանդիսանալ, որ իրավական պաշտպանության միջոցները հասանելի լինեն միայն խիստ սահմանափակ պայմաններով²⁶:

Վերոգրյալից պարզ է դառնում, որ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի շրջանակներում հիմնադրության փաստաթղթերի կամ նախատեսվող գործունեության վերաբերյալ հանրային քննարկումներին մասնակցած լինելու կամ հանրային քննարկումներին մասնակցելու հնարավորություն չընձեռելու հանգամանքները որևէ կերպ չեն կարող հանդիսանալ նախապայման՝ հասարակական կազմակերպությունների կողմից դատարան դիմելու իրավունքի իրացման տեսանկյունից:

Ինչ վերաբերում է երրորդ նախապայմանին՝ հայց ներկայացնելու պահին նախորդող առնվազն երկու տարվա ընթացքում շրջակա միջավայրի պահպանության ոլորտում գործունեություն ծավալած լինելու հանգամանքին, ապա հայտնում ենք, որ թեև պարզ է, որ օրենսդիրը սրանով փորձել է լուծել «բավականաչափ շահագրգռվածության» խնդիրը, այնուամենայնիվ, այն չի համապատասխանում հասարակական կազմակերպությունների համար այս ոլորտում արդարադատությունը մատչելի դարձնելու՝ եվրոպական զարգացման միտումներին: Ավելին՝ հակասում է Սահմանադրական դատարանի մի շարք որոշումներում արդար դատաքննության և դատարանի մատչելիության իրավունքների առնչությամբ արտահայտած իրավական դիրքորոշումներին²⁷, որոնցով գտել է, որ. «... որևէ առանձնահատկություն կամ ընթացակարգ չի կարող խոչընդոտել կամ կանխել դատարան

²⁶ Case C-263/08, Djurgården-Lilla Värtans Miljöskyddsforening v. Stockholms kommun, Judgement of the Court (Second Chamber) of 15 October 2009

²⁷ Տե՛ս օրինակ ՍԴՈ-1127, ՍԴՈ-1190 և ՍԴՈ-1222, ՍԴՈ-1257 որոշումները:

դիմելու իրավունքի արդյունավետ իրացման հնարավորությունը, իմաստագրել ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքը կամ դրա իրացման արգելք հանդիսանալ»²⁸: Կարծում ենք, որ այս դեպքում ևս գործ ունենք այնպիսի առանձնահատկության ամրագրման հետ, որը խոչընդոտում և իմաստագրկում է դատական պաշտպանության իրավունքի էությունը:

Հատկանշական է, որ նախքան օրենսդրական նման կարգավորումը, «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի նախագծի²⁹ 16-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով ամրագրված էր, որ դատարան դիմելու իրավունքը Կազմակերպությունը կարող էր իրականացնել նաև ներկայացնելով հայց՝ պատմամշակութային արժեքների պահպանության ոլորտներում հանրության իրավունքների, օրինական շահերի պաշտպանության, և պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների՝ ՀՀ օրենսդրությանը հակասող գործողությունները, ակտերն ու անգործությունը բողոքարկելու համար: Սակայն, ինչպես արդեն նշվեց, ներկայումս դատարան դիմելու իրավունք ընձեռնված է միայն շրջակա միջավայրի պահպանության ոլորտում, ինչը կարելի է արձանագրել հետքայլ՝ ի համեմատ օրինագծով նախատեսված կարգավորման:

Հարկ է նշել նաև, որ ներկայումս շրջանառության մեջ է դրված ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում և ««Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որով նախատեսվում է հասարակական կազմակերպություններին հնարավորություն վերապահել ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի վիճարկման պահանջով դիմել ՀՀ վարչական դատարան: Դիմումը ներկայացվում է Կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակների և խնդիրների համաձայն³⁰:

Անդրադառնալով հասարակական կազմակերպությունների կողմից հանրային շահի պաշտպանությամբ դատարան դիմելու իրավունքի իրացման ոլորտային սահմանափակվածությանը՝ հարկ է նշել, որ Սահմանադրական դատարանը, [ՄԴՈ-906 նրոշմամբ](#) անդրադառնալով հասարակական կազմակերպությունների դերին և դատարան դիմելու իրավունք վերապահելու կարևորությանը, արձանագրել է, որ «Քաղաքացիական հասարակությունն ինքնուրույն և պետությունից անկախ հասարակական մեխանիզմների և հարաբերությունների համակարգ է, որը պայմաններ է ապահովում կոլեկտիվների և անհատների մասնավոր շահերի և պահանջունքների բավարարման համար: Քաղաքացիական հասարակության բաղադրատարր հանդիսացող սոցիալական կառուցակարգերի շրջանակում ուրույն տեղ են զբաղեցնում հասարակական

²⁸ Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի 2016 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ ՄԴՈ-1315 որոշումը, կետ 10:

²⁹ Հասանելի է՝ http://www.justice.am/storage/files/legal_acts/legal_acts_1629433682141_hk.pdf :

³⁰ Հասանելի է՝ <https://www.e-draft.am/projects/1430/about> :

կազմակերպությունները: Վերջիններիս դերն ինքնանպատակ չէ, քանի որ, նախ՝ միավորումների գործունեությունը նախատեսված է Սահմանադրությամբ և Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայով, երկրորդ՝ հասարակական կազմակերպություններն ունեն կոլեկտիվների և անհատների մասնավոր շահերի և պահանջումների իրացմանը, այդ թվում՝ հանրային կառավարմանը մասնակցելու գործառույթ, երրորդ՝ հասարակական կազմակերպությունների միջոցով է, որ հասարակությունը հնարավորություն է ստանում հասարակական հսկողություն և վերահսկողություն սահմանել պետական կառավարման և տեղական ինքնակառավարման նկատմամբ: Այս հանգամանքը, հատկապես, կարևորվում է այն պարագայում, երբ առկա է ոչ թե անհատի, այլ իրավունքի կոլեկտիվ սուբյեկտի սուբյեկտիվ իրավունքների կամ օրինական շահերի խախտում»:

Սահմանադրական դատարանն իր որոշմամբ պարտավորեցրել է օրենսդրին հետևել միջազգային օրինակելի փորձին՝ *actio popularis* բողոքների ինստիտուտի առնչությամբ և ամրագրել հասարակական կազմակերպությունների կողմից դատարան դիմելու դեպքերը և կարգը՝ հիմք ընդունելով հասարակական կազմակերպությունների իրավական շահագրգռվածությունը (կանոնադրական համապատասխան իրավասությամբ օժտված) լինելը: Մինչդեռ օրենսդիրը 2016թ. կատարված օրենսդրական փոփոխությամբ սահմանափակվել է հանրային շահի բովանդակությունը կազմող միայն մեկ ոլորտում հասարակական կազմակերպությունների կողմից դատարան դիմելու իրավունքի ամրագրմամբ, ինչը չի համապատասխանում Սահմանադրական դատարանի որոշմանը, քանի որ Սահմանադրական դատարանը չի նշել միայն շրջակա միջավայրի պահպանության ոլորտը, այլ **կոլեկտիվ կամ համայնքային կոնկրետ շահերի պաշտպանություն պահանջող ոլորտներն՝ առհասարակ**, իսկ միայն շրջակա միջավայրի պահպանության հարցերով հասարակական կազմակերպությունների դատարան դիմելու իրավունք վերապահելով, ստացվում է, որ կոլեկտիվ և համայնքային շահերի պաշտպանություն ենթադրվում է միայն շրջակա միջավայրի պահպանության ոլորտում: Օրենսդրական կարգավորումը չի համապատասխանում նաև ՄԴ-ի նախանշած եվրոպական արդի զարգացման միտումներին, քանի որ, ինչպես ներկայացվեց վերը, եվրոպական ոչ մի երկրում արդարադատության մատչելիության սահմանափակման այսպիսի ծավալ առկա չէ:

Ավելին՝ փոփոխության ենթակա է նաև քաղաքացիական դատավարության օրենսգիրքը, քանի որ ոչ բոլոր դեպքերում է համայնքային և կոլեկտիվ շահի պաշտպանության անհրաժեշտությունը ծագում հանրային իրավահարաբերությունների տիրույթում:

ՀՀ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի համաձայն՝ «1. Յուրաքանչյուր անձ իրավունք ունի սույն օրենսգրքով սահմանված կարգով դիմելու

դատարան՝ Սահմանադրությամբ, օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կամ պայմանագրով նախատեսված իր իրավունքների և օրինական շահերի պաշտպանության համար: 2. Օրենքով նախատեսված դեպքերում այլ անձանց իրավունքների ու օրինական շահերի պաշտպանության համար դատարան դիմելու իրավունք ունեն օրենքով այդպիսի իրավունք կամ լիազորություն ունեցող անձինք: (...)

ՀՀ Քաղաքացիական դատավարության նախկին օրենսգրքի 2-րդ հոդվածի համաձայն՝ «1. Շահագրգիռ անձն իրավունք ունի սույն օրենսգրքով սահմանված կարգով դիմել դատարան՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կամ պայմանագրով նախատեսված իր իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության համար: 2. Սույն օրենսգրքով և այլ օրենքներով նախատեսված դեպքերում այլ անձանց իրավունքների, ազատությունների ու օրինական շահերի պաշտպանության համար իրավունք ունեն դատարան դիմել այդպիսի պաշտպանությամբ հանդես գալու իրավասություն ունեցող անձինք»:

Փաստորեն, նախորդ օրենսգիրքը դատարան դիմելու հիմք էր ընդունում իրավական շահագրգռվածության մոտեցումը (interest-based approach), իսկ գործող օրենսգիրքը՝ սուբյեկտիվ իրավունքի խախտման փաստով դիմելու մոտեցումը (right-based approach): Ամեն դեպքում, երկու իրավակարգավորումների պարագայում էլ, հասարակական կազմակերպության կողմից օրենքով սահմանված ոլորտներում հանրային շահի դատական պաշտպանության իրավասությունը և իրավունքի իրացման կարգը սահմանող նորմերի բացակայության պայմաններում, հասարակական կազմակերպության կողմից դատարան դիմելու հնարավորությունը սահմանափակված է ՀՀ քաղաքացիական դատավարության և վարչական դատավարության օրենսգրքերով:

Ի հակադրումն նշվածի՝ ազատ տնտեսական մրցակցությունը, բարեխիղճ մրցակցության համար անհրաժեշտ միջավայրի ապահովումը և սպառողների շահերի պաշտպանությունը կարգավորող ոլորտային օրենքի՝ «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ շահագրգիռ անձանց տնտեսական շահերը պաշտպանելու իրավասություն ունեցող կազմակերպություններին իրավունք է վերապահված դիմել դատարան՝ անբարեխիղճ մրցակցությունը դադարեցնելու պահանջով: Համաձայն այդ նորմի՝ յուրաքանչյուր շահագրգիռ անձ, այդ թվում՝ սպառողը, որն անբարեխիղճ մրցակցության հետևանքով վնաս է կրել, իրավունք ունի անբարեխիղճ մրցակցությունը դադարեցնելու պահանջով դիմելու դատարան: **Սույն իրավունքը վերապահվում է նաև շահագրգիռ անձերի տնտեսական շահերը պաշտպանելու իրավասություն ունեցող կազմակերպություններին:** Փաստորեն, համեմատած ՀՀ քաղաքացիական դատավարության և վարչական դատավարության օրենսգրքերով հասարակական կազմակերպություններին վերապահված դատարան դիմելու իրավունքի,

ուրտը կարգավորող օրենքն ընդլայնել է հասարակական կազմակերպությունների՝ դատարան դիմելու իրավունքը կոնկրետ ոլորտում՝ որպես հիմք ընդունելով կազմակերպության՝ կոնկրետ շահը ներկայացնելու իրավասությունը, այսինքն՝ կանոնադրական նպատակը: Կարծում ենք, որ նույն տրամաբանությամբ էլ պետք է վերացնել հասարակական կազմակերպությունների՝ դատարան դիմելու իրավունքի սահմանափակումը հանրային շահը սպասարկող այլ ոլորտներում ևս: Հարկ է ընդգծել նաև, որ բերված օրինակում շահի պաշտպանությունը ենթակա է դատական պաշտպանության՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով և ենթակա է քննության՝ ընդհանուր իրավասության դատարանների կողմից, քանի որ անբարեխիղճ մրցակցությունը դադարեցնելու պահանջով պատասխանողը չի հանդիսանալու որևէ վարչական մարմին, այլ հանդիսանալու է մասնավոր իրավահարաբերության որևէ սուբյեկտ:

Այսպիսով, թեև Մահմանադրական դատարանը որոշմամբ անդրադարձել է կոլեկտիվ և համայնքային շահերի պաշտպանությամբ դատարան դիմելու իրավունքին՝ վարչական դատավարության օրենսգրքի համատեքստում և, ըստ էության, օրենսդրական փոփոխություններն ուղղորդել վարչական դատավարության օրենսգիրք, այնուամենայնիվ, համապատասխան փոփոխություններ պետք է կատարվեն նաև քաղաքացիական դատավարության օրենսգրքում, քանի որ, ինչպես վերը նշվեց, հանրային շահի պաշտպանության անհրաժեշտությունը ծագում է նաև մասնավոր իրավահարաբերություններից բխող վեճերով, որոնք ենթակա են քննության՝ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ ընդհանուր իրավասության դատարանների կողմից:

3. «Հանրային շահ» և «հանրային նշանակության հարցեր» սահմանումները

Թեև ԵՄ-ի անդամ պետությունները կարգավորում են «հանրային նշանակության հարցեր»-ով «հանրային շահ»-ի պաշտպանությամբ հասարակական կազմակերպությունների և միավորումների դատարան դիմելու իրավունքի հետ կապված հարցերը, այնուամենայնիվ, գրեթե, բոլոր անդամ պետությունների օրենսդրական համակարգերը չեն ամրագրում «հանրային շահ» և «հանրային նշանակության հարցեր» եզրույթների իրավական բնորոշումները: Պետություններն առանձնացրել են ոլորտներ, որոնց բովանդակությունը կազմող հարաբերությունների դատական պաշտպանության հնարավորությունը վերապահված է հասարակական կազմակերպություններին՝ այդպիսով այդ ոլորտներում ծագող խնդիրների լուծումը որակելով որպես հանրային շահի պաշտպանություն:

Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհուրդը Կարծիք է հայտնել առ

այն, որ Գերագույն դատարանները պետք է նախադեպի միատեսակության ապահովման և իրավունքի զարգացման հարցերում երաշխավորեն և խթանեն հանրային շահը: Քանի որ սա սույն Կարծիքի շրջանակներից դուրս է, ԵԴԽՄ-ն փորձ չի կատարի սահմանելու, թե ինչպես պետք է կազմակերպվեն Գերագույն դատարանները, և ինչպես պետք է ապահովել դրանց մատչելիությունը³¹:

«Հանրային շահ» եզրույթի հետ կապված հետաքրքիր դիտարկում է անում Ի.Ա.Պոկրովսկին. «Թե ի՞նչ է հանրային շահը, ո՞ր արարքն է արժանի պատժի, մենք որոշում ենք նախօրոք և վերացական կերպով, այն ամրագրում ենք օրենքում (քրեական), այնուհետև իշխանական մարմիններին պատվիրելով դատել և պատժել՝ in concreto: Հռոմեական accusatio-ի և հանրային միջոցների ընդհանուր պատկերը տպավորություն է ստեղծում, թե հռոմեացիները բոլորովին այլ կերպ էին մտածում: Թվում է՝ նրանք հանրային շահ էին համարում միայն այն, ինչը փաստացիորեն in concreto հարուցում է հանրության հետաքրքրությունը, ինչը յուրաքանչյուր անգամ հանրության շրջանակից գտնում է ակտիվ պաշտպան: Որքան էլ տեսականորեն հանցավոր համարվի հայտնի արարքը, եթե հանրության շրջանից մեղադրող չի գտնվում, ուրեմն հանրությունն՝ ի դեմս իր բոլոր առանձին ներկայացուցիչների, կատարվածին հանգիստ և անտարբեր է վերաբերվում. ուրեմն ժողովրդի խղճի ձայնը լռում է, ուրեմն հանրային շահի իրական խախտում տեղի չի ունեցել, ուրեմն մագիստրատները միջամտելու առիթ չունեն»³²:

ՀՀ իրավական համակարգում կիրառվում են «հանրային շահ», «հանրային գերակա շահ» եզրույթները: Մասնավորապես, [«Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքում](#), թեև, տրված չէ «հանրային գերակա շահ» հասկացության բովանդակությունը, այնուամենայնիվ, նշված օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված է, որ գերակա հանրային շահը կարող է հետապնդել հետևյալ նպատակները.

- ա) պետության պաշտպանության, պետության ու հասարակության անվտանգության ապահովումը,
- բ) Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված պարտավորությունների կատարման ապահովումը,
- գ) միջազգային և հանրապետական նշանակության պատմության և մշակութային արժեքների կամ հուշարձանների, ինչպես նաև բնության հատուկ պահպանվող տարածքների ստեղծման կամ պահպանության ապահովումը,
- դ) շրջակա միջավայրի պահպանության ապահովումը,

³¹ Տե՛ս «Դատական ակտերի որակի մասին» ԵԴԽՄ թիվ 11 (2008) կարծիքը, հասանելի է՝ <https://rm.coe.int/opinion-no20-in-armenian-20-2017-/16808e68f9> :

³² Տե՛ս Покровский И.А. Частная защита общественных интересов в Древнем Риме, էջ 191:

ե) կրթության, առողջության, սպորտի, ինչպես նաև՝ գիտության կամ մշակույթի զարգացման ապահովումը,

զ) էներգետիկայի, հեռահաղորդակցության, ջրամատակարարման, ջրահեռացման, ջերմամատակարարման, քաղաքաշինական, ընդերքի հետախուզման, ընդերքօգտագործման, տրանսպորտի, հաղորդակցության ուղիների կամ բնակավայրերի ենթակառուցվածքների զարգացման բնագավառում համապետական կամ համայնքային կամ միջհամայնքային կարևոր նշանակություն ունեցող ծրագրերի իրականացման ապահովումը,

է) անձանց կյանքի, առողջության կամ սեփականության պաշտպանությունը,

ը) արտակարգ իրավիճակների կանխումը, արտակարգ իրավիճակների հնարավոր հետևանքների նվազեցումը, արտակարգ իրավիճակների հետևանքների վերացումը:

Ճիշտ է՝ հանրային շահն առավել լայն նպատակներ է հետապնդում, քան նշվածներն են, քանի որ վերջիններս արտացոլում են միայն սեփականության օտարման համատեքստում հետապնդվող նպատակները, այնուամենայնիվ, հանրային շահի որոշման նման կարգավորում անհրաժեշտ է նախատեսել նաև «Հասարակական կազմակերպությունների մասին» օրենքով՝ նախատեսելով հանրային շահի պաշտպանությամբ հասարակական կազմակերպությունների՝ դատարան դիմելու իրավունքը և այն նպատակները, որը տվյալ դեպքում հանրային շահը կարող է հետապնդել:

Դատական պրակտիկայում «իրավական շահի» և «հանրային շահի» բովանդակության բացահայտման և հատկանշմանն է ուղղված նաև ՀՀ վճռաբեկ դատարանի ներքոնշյալ դիրքորոշումը:

ՀՀ վճռաբեկ դատարանը թիվ ՎԴ/3477/05/13 քաղաքացիական գործով կայացված [նրոշմամբ](#) անդրադարձել է դատարան դիմելու իրավունքին՝ իրավական շահի համատեքստում՝ նշելով, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի իրավակարգավորման առարկայի իմաստով դատարան դիմելու իրավունքի առկայության համար բավարար չէ միայն սուբյեկտների անհրաժեշտ կազմի վերաբերյալ պահանջի բավարարումը: Այն, ի թիվս այլ պայմանների, պետք է դիտարկի նաև համապատասխան սուբյեկտի մոտ դատարան դիմելու իրավունքը՝ իրավական շահի առկայության համատեքստում, ելակետ ընդունելով օրենսդրորեն սահմանված իրավական նախադրյալները:

Վճռաբեկ դատարանն ընդգծել է, որ իրավունքում «շահ» հասկացության դասակարգումը հանրայինի և մասնավորի խիստ պայմանական է, քանի որ հանրային և մասնավոր շահերը հանդես են գալիս փոխկապակցվածության մեջ և գրեթե միշտ՝ փոխլրացնում միմյանց: Այսպես, իրավական շահը դասակարգվում է հանրայինի և ոչ հանրայինի՝ դասակարգման հիմքում դնելով այդ շահը կրող սուբյեկտին. հանրային շահի

կրողը հասարակությունն է որպես մեկ միասնական, ամբողջական օրգանիզմ: Ընդ որում, շահը հանրային որակելու համար պարտադիր նախապայման չէ հասարակության բոլոր անդամների կողմից այդ շահի ընկալելի, ընդունելի լինելու հանգամանքը: Սակայն հանրային շահը տարբերվում է մասնավոր շահից ոչ միայն սուբյեկտային չափանիշով, այլև իր առարկայով, **քանի որ հանրային շահի առարկան համընդհանուր, համամարդկային որոշակի բարիքներն են, որոնց առարկայացումը հասարակական կյանքում անհրաժեշտ նախապայման է հասարակության գոյատևման և հետագա զարգացման համար**³³:

Հանրային իրավահարաբերությունները ծագում են հանրային շահը սպասարկող սուբյեկտների՝ պետության և համայնքի կողմից այն իրացնելու և կյանքի կոչելու, սոցիալական ոլորտում այն առարկայացնելու կապակցությամբ, քանի որ հանրային իրավունքով կարգավորվող հարաբերության շրջանակներում սուբյեկտը գործում է ոչ թե իր, այլ հանրային շահերի վերհանման և ապահովման նպատակով:

Մեկ այլ որոշմամբ ՀՀ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ հանրային է այն իրավահարաբերությունը, որում կողմերից մեկի դերում անպայմանորեն հանդես է գալիս հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտը, որն այդ հարաբերության ընթացքում հանրային շահի իրացման կապակցությամբ իրացնում է օրենքով սահմանված իր հանրային իշխանական լիազորությունները³⁴: ՀՀ Վճռաբեկ դատարանի գնահատմամբ՝ իրավահարաբերության հանրային լինելու և դրանից բխող վեճը վարչական դատարանին ընդդատյա լինելու հանգամանքը պարզելու նպատակով պետք է գնահատման առարկա դարձվեն հետևյալ հանգամանքները.

1. արդյո՞ք իրավահարաբերության կողմերից մեկը հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտ է, թե՛ ոչ,

2. արդյո՞ք այդ իրավահարաբերության բովանդակությունը կազմում է հանրային իշխանական լիազորությամբ օժտված սուբյեկտի կողմից իր հանրային իշխանական լիազորությունների իրականացման պարտականությունը, թե՛ ոչ,

3. արդյո՞ք այդ իրավահարաբերությունը ծագել է հանրային շահի իրացման կապակցությամբ (իրավահարաբերությունն ուղղված է եղել հանրային շահի՝ սոցիալ-իրավական պրակտիկայում իրացմանը և առարկայացմանը), թե՛ ոչ: Վճռաբեկ դատարանի գնահատմամբ միայն վերոգրյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում է հնարավոր փաստել իրավահարաբերության հանրային լինելու հանգամանքը, ինչպես նաև այդ հարաբերությունից բխող վեճերի ընդդատության հարցը, հաշվի առնելով նաև այն կարևոր հանգամանքը, որ հանրային հարաբերություններից բխող բոլոր վեճերը չեն, որ վերապահված են վարչական դատարանի քննությանը, քանի որ ՀՀ վարչական

³³ Տե՛ս [ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումը վարչական գործ թիվ ՎԳ/0830/05/14 մասին](#):

³⁴ Տե՛ս [ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումը վարչական գործ թիվ ՎԳ/1621/05/14 մասին](#):

դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վարչական դատարանին ընդդատյա չեն Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի (...) ենթակայությանը վերապահված գործերը, ընդհանուր իրավասության դատարանի ենթակայությանը վերապահված քրեական գործերը, ինչպես նաև պատժի կատարման հետ կապված գործերը³⁵:

ՀՀ վճռաբեկ դատարանի վերոնշյալ դիրքորոշումից կարելի է եզրահանգել, որ վարչական դատավարության կարգով քննության ենթակա և Վարչական դատարանին ընդդատյա իրավահարաբերության պարտադիր պայման է հանդիսանում հանրային շահի իրացման ուղղվածությունը: Եթե մեկնաբանենք ՀՀ վճռաբեկ դատարանի նշված դիրքորոշումը, կստացվի, որ հանրային ցանկացած իրավահարաբերությունից ծագող կոլեկտիվ կամ համայնքային շահերից բխող ցանկացած վեճով հասարակական կազմակերպություններին պետք է օժտել նշված շահերի դատական պաշտպանության իրավունքով: Այսինքն, այն դեպքում, երբ վեճը վերաբերում է ոչ թե մեկ, այլ մի խումբ անձանց շահերին, իրավահարաբերությունը հանրային է և ուղղված հանրային իշխանական լիազորությամբ օժտված սուբյեկտի կողմից իր հանրային իշխանական լիազորությունների իրականացմանը, պետք է առկա լինի հասարակական կազմակերպության իրավունքը՝ հայցել դատական պաշտպանություն:

ՀՀ սահմանադրական դատարանն օրենսդրին ուղղորդել է առանձնացնել հասարակական կազմակերպության կողմից հանրային շահի դատական պաշտպանության հայցման դեպքերը և կարգավորել, սակայն թիվ [ՄԴՈ-906 որոշմամբ](#) չի առանձնացրել այդ դեպքերը: Մասնավորապես՝ Սահմանադրական դատարանը սահմանել է, որ հանրային գործառույթի իրականացման կապակցությամբ հանրային իրավահարաբերություններում ծագող կոլեկտիվ և համայնքային շահերի դատական պաշտպանությունը, ելնելով կազմակերպության իրավական շահագրգռվածությունից (կանոնադրական նպատակներից), պետք է վերապահել հասարակական կազմակերպություններին: Միաժամանակ նշել է, որ նման դեպքերն, այնուամենայնիվ, պետք է սահմանվեն օրենքով, թեև հենց ինքը՝ Սահմանադրական դատարանը չի նշել այդ դեպքերը, միայն դեպքերի ամրագրման հարցում ուղղորդել է դեպի միջազգային փորձը և ներկա եվրոպական զարգացման միտումները:

Համադրելով Վճռաբեկ և Սահմանադրական դատարանների դիրքորոշումները և ղեկավարվելով «հանրային շահ»-ի կարգավորման՝ օրենսդրի որդեգրած վերը ներկայացված մոտեցումներով՝ առաջարկում ենք նախատեսել հետևյալ նպատակները, որոնք կարող է հետապնդել հանրային շահը հասարակական կազմակերպությունների կողմից դատարան դիմելու իրավունքի համատեքստում.

1. Հանրային առողջության և անվտանգության ապահովում,

³⁵ Տե՛ս Վճռաբեկ դատարանի թիվ ՎԴ/0823/05/14 գործով 2016 թվականի ապրիլի 22-ին կայացված որոշումը:

2. Հանրային սեփականության պաշտպանություն,
3. Պատմության և մշակութային արժեքների կամ հուշարձանների, ինչպես նաև բնության հատուկ պահպանվող տարածքների ստեղծման կամ պահպանության ապահովում,
4. Կրթության, առողջության, սպորտի, ինչպես նաև գիտության կամ մշակույթի զարգացման ապահովում,
5. Առավել խոցելի խմբերի իրավունքների պաշտպանությունը, երեխաների, հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությունը,
6. Ձերբակալված, կալանավորված, ինչպես նաև ազատագրկման դատապարտված անձանց իրավունքների պաշտպանությունը,
7. Անձնական տվյալների պաշտպանությունը,
8. Խտրականության բոլոր ձևերի դրսևորման բացառումը,

Այսպիսով, ղեկավարվելով պետական կառավարման և տեղական ինքնակառավարման նկատմամբ հասարակական վերահսկողության արդյունավետության բարձրացման նկատառումներով, հիմք ընդունելով ՀՀ սահմանադրական դատարանի թիվ ՍԴ-906 որոշումը և եվրոպական արդի զարգացման միտումները, անհրաժեշտ է հասարակական կազմակերպություններին հանրային նշանակության հարցերով դատարան դիմելու իրավունք վերապահելու իրավակարգավորումներ մշակել, որոնք լիարժեքորեն կհամապատասխանեն ժամանակակից միջազգային չափորոշիչներին և կբխեն այն փաստաթղթերից, որոնց միացել է Հայաստանի Հանրապետությունը:

Թավշյա հեղափոխությունից հետո Հայաստանի Հանրապետությունում ժողովրդավարական զարգացումների ներկայիս ժամանակահատվածում, պետությունը պետք է առաջնահերթ կարևորի հասարակական կազմակերպությունների դերը ժողովրդավարական ինստիտուտների ձևավորման, կայացման և հզորացման գործընթացում: Նման ջանքերի արտահայտությունը կհանդիսանար որոշումների կայացման մեջ քաղաքացիական հասարակության ինստիտուտների և նրա մասը կազմող հասարակական կազմակերպությունների՝ որոշումների կայացմանը մասնակցելու, որոշումների իրականացման նկատմամբ քաղաքացիական վերահսկողության իրական մեխանիզմներով ապահովումը, որպիսին կհանդիսանար հանրային շահի պաշտպանության *actio popularis* իրավական ընթացակարգերի ամրագրումն ազգային օրենսդրությամբ:

Ելնելով այս համոզմունքից և ղեկավարվելով ներկայացված վերլուծությամբ՝ ներկայացնում ենք ազգային օրենսդրությամբ *actio popularis*-ի մեխանիզմների ամրագրման նպատակով հետևյալ առաջարկությունները:

Առաջարկություններ

1. Հանել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 216.6 հոդվածի 2-րդ մասից 2-րդ և 3-րդ կետերը, համապատասխանաբար «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասից 2-րդ և 3-րդ կետերը:
2. Փոփոխել «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասը, և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 216.6 հոդվածի 1-ին մասը հետևյալ խմբագրությամբ՝ «Կազմակերպությունն իր շահառուների օրինական շահերը դատարանում ներկայացնում է հանրային շահի պաշտպանության հարցերով: Հանրային շահը կարող է հետապնդել հետևյալ նպատակները՝ 1) հանրային առողջության և անվտանգության ապահովումը, 2) հանրային սեփականության պաշտպանությունը, 3) պատմության և մշակութային արժեքների կամ հուշարձանների, ինչպես նաև բնության հատուկ պահպանվող տարածքների ստեղծումը կամ պահպանության ապահովումը, 4) կրթության, առողջության, սպորտի, ինչպես նաև գիտության կամ մշակույթի զարգացման ապահովումը, 5) առավել խոցելի (ոչսկային) խմբերի, երեխաների և հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությունը, 5) ձերբակալված, կալանավորված, ինչպես նաև ազատազրկման դատապարտված անձանց իրավունքների պաշտպանությունը՝ պահման պայմանների հարցերով, 6) անձնական տվյալների պաշտպանությունը, 7) խտրականության բացառումը:
3. «Իրավահավասարության ապահովման մասին» ՀՀ օրենքի նախագծում կատարել փոփոխություն, մասնավորապես՝ Նախագծի 7-րդ հոդվածը լրացնել 4-րդ մասով՝ «Հասարակական կազմակերպությունները շահառուների օրինական շահերը դատարանում ներկայացնում են խտրականության դրսևորման դեպքերում: